Армянский Колледж
+7 904 506 91 28
Учитесь АРМЯНСКОМ говорить на языке
Частные уроки армянского языка
тел. 8 904 509 68 76

Օրերի հետ

Հաղթանակների մայիս

Մայիսը հայոց պատմության ամենապայծառ ամիսն է: Դեռևս 5-րդ դարում այն մեզ կանգնեցրել է հավատի և ազգային ինքնության կորստի վտանգի առջև: Եվ ամսի 26-ին մեզ պարգևել է փառավոր Ավարայր: 1918 թ. մենք արդեն կուլ էինք գնում դաժան ու ոխերիմ թշնամուն, և թվում էր՝ արյունածոր հայը այլևս փրկվելու ոչ մի հույս չունի: Սակայն, հայոց բանակը, կռվելով աննախադեպ մոլեգին քաջությամբ, Սարդարապատի ճակատամարտում հաղթեց թուրքերի 6-7 անգամ գերակշիռ ուժերին: Եվ, եթե Ավարայրով համայն հայ ժողովուրդը ապացուցեց հավատարմությունը մեր պապերի ավանդներին ու նվիրական զգացմունքներին, ապա Սարդարապատը եկավ մեկընդմիշտ համոզելու մեր թշնամուն, որ հայ զինվորը անպարտելի է՝ հայրենի հողը պաշտպանելիս: Հերթական հաղթանակն ու բերկրանքը հայոց մայրերին այցելեց 1945 թ. մայիսի 9-ին: Մեր սուրը իրապես փառքով դրվեց պատյան. մեծ թվով հայ մարշալների, գեներալների և հերոսների սխրագործությունների, ավաղ, նաև հազարավոր զոհերի գնով: 1992 թ. մայիսի 9-ին Արցախի հայորդիներն իրենց սուրբ ավյունի ու արյան գնով ազատագրեցին հինավուրց բերդաքաղաք անառիկ Շուշին՝ հաստատելով, որ այնտեղ է սխրանքը ծնվում, երբ վերջանում է ամեն մի հնար:

Հաղթանակի օրը՝ Սուրբ Հարություն եկեղեցում

Այս բոլոր պատմական հաղթանակների արժեքը գերազանց գիտակցում են Ռոստովի մարզի հայկական համայնքն ու հայ եկեղեցին: Ամեն տարի հայ ժողովուրդը հավաքվում է հայկական եկեղեցիներում՝ հերթական անգամ վերաարժեքավորելու մեր պատմությունը: Այս տարվա մայիսի 9-ը նշանավորվեց որպես Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակ, Շուշիի ազատագրման 23-ամյակ և Արցախի բանակի ստեղծման օր:

Արդեն 4-րդ տարին է՝ Դոնի Ռոստովի Սուրբ Հարություն եկեղեցու քահանա Տեր Տիրան Ավագյանի նախաձեռնությամբ հայ համայնքն իր մասնակցությունն է ունենում մայիսյան հաղթանակներին նվիրված միջոցառումներին: Հայրենական մեծ պատերազմում և Շուշիի ազատագրման ժամանակ զոհված հերոսների պատվին Սուրբ Հարություն եկեղեցում կատարվող հոգեհանգստի արարողությանը մասնակցելուց հետո, ներկաները ծաղիկներ դրեցին եկեղեցու բակում վերջերս տեղադրված խաչքարին, որը նվիրված է հաղթանակի 70-ամյակին: Այնուհետև բազմությունը երթով շարժվեց դեպի եկեղեցու հարևանությամբ գտնվող Ֆրունզեի անվան այգի, որտեղ գտնվում է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին նվիրված հուշակոթողը: Անմար կրակի շուրջ ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնելուց ու Մեծ հայրենականի մասնակիցներին իրենց խոնարհումն արտահայտելուց հետո՝ բազմությունը վերադարձավ եկեղեցու բակ, որտեղ տոնական ուրախ համերգ էր տեղի ունենալու:

Համերգը սկսվեց Կիմ Նազարեթովի անվան ջազային դպրոցի նվագախմբի ելույթով (դպրոցի տնօրեն՝ միջազգային մրցույթների դափնեկիր Արամ Ռուստամյանց): Համերգին մասնակցում էին եկեղեցու հովանու ներքո գործող «Զվարթնոց» պարային համույթի սաները (գեղ. ղեկավար՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Գրիգորյան), «Դիամանդ» պարային համույթը (գեղ. ղեկավար՝ Արմեն Գրիգորյան), «Ֆորս» պարային ստուդիայի փոքրիկները (գեղ. ղեկավար՝ Մարինե Գրիգորյան) և «Արևիկ» անսամբլի սաները (գեղ. ղեկավար՝ ՌԴ կրթության վաստակաշատ աշխատող Արմինե Սագերտյանց): Ելույթ ունեցան նաև անհատ կատարողներ:

Միջոցառումն ավարտվեց Սուրբ Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Տիրան Ավագյանի ոգեշունչ ելույթով: Նա նշեց, որ նման միջոցառումներն անհրաժեշտ են՝ պահպանելու կողք կողքի ապրող ժողովրդի միասնականությունը՝ անկախ ազգային պատկանելությունից, քանի որ հենց այսպես են հաղթել մեր հայրերն ու պապերը:

Սիրելի հայրենակիցներ, եկեք չմոռանանք, որ քանի դեռ հավերժի հայկական անվանվող երթը շարունակվում է գեղեցիկի ու կատարյալի ձգտման ճանապարհով, ոչ ոք չի կարող խափանել բնականի լուսեղեն ընթացքը: Յուրաքանչյուր ապրիլի հաջորդելու է մայիսը, իսկ յուրաքանչյուր մայիս հայ ժողովուրդը տոնելու է իր հիշարժան հաղթանակների օրը՝ ո՞ւր էլ որ լինի:

Աստղիկ Գրիգորյան
Արմինե Հովսեփյան

ԱՊՐԵԼՈՒ ԲԱՆԱՁԵՎ՝ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՄ ՀԱՅԿԱԿԱՆ

(Նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին)

Հայոց իմ տաճար, դու ամենուր ես,
քո տարագիր զավակների պես:

Հոգուս աչքերով ամեն օր այցի եմ գալիս քեզ… աչքերս փակ տեսնում եմ քո վեհաշուք գմբեթը՝ արևի ճաճանչների մեջ: Տեսնում եմ շրջակա ժայռերի խստաբարո կեցվածքը, ձորն իջնող մանուշակաթույր մշուշի բարակ քողը: Մերթ ինձ երևում ես լուսաբացի ցոլքերի ու ցողերի մեջ, մերթ՝ մայրամուտի շիկ շառագույնում…

Ես գլորվում էի փշոտ արահետով՝ Արեգ տատիս փեշը պինդ բռնած: Նա հորդորում էր՝ համբերիր, հասանք, իսկ ինքն ուրախ էր հարսնահանդես շտապող աղջնակի պես՝ թեթև և ուրախ: Նա շարունակ Քո մասին էր պատմում, ու հաճախ խոսքի մեջ մրմնջում. – Տեր, փառքդ շատ, փառավորվես, փրկես, օրհնես ու ողորմես իմ զավակներին… Ասա՝, բալաս, ասա՝ Հայր մերը: Ու կրկնել էր տալիս մինչև տեղ հասնելը: Վերջին բլուրն էլ բարձրացանք… և ինչ փառահեղություն… Դու վեր ես խոյանում իմ առջև քո ողջ վեհությամբ… Եկեղեցիս՝ հայկական… ահա և Դու: Կարկամում ու պապանձվում եմ վաղորդյան քո շքեղությունից. ադամանդափայլ քո խաչից լույս է ծորում խորանի մուտքի առաջ՝ ուր ծնկել է Արեգ տատս՝ արցունքախառն աղերսներով…

Հորդորում է ինձ կրկնել, ծնկել ու խնդրել…

Ես լուռ հնազանդվում եմ:

– Ախ, ողորմի ձեզ, մեր խոնարհ ու գեղջուկ մամիկներ. դուք եղաք մեր կարելի ու անկարելի ժամանակների խիզախ ջահակիրներ, մեր հոգու Լույսի անքուն ճրագալույցներ: Ողորմի ձեզ: Լույս դառնաք:

Տարիներ անց՝ ես հասկացա, որ հենց այդ օրը, հայկական իմ եկեղեցին, փոքրիկ ուխտավորիս համար դարձավ հոգուս ծննդավայր: Այդ օրը շատ կարևոր Մեկը ծնվեց իմ մեջ՝ Քո խորանի առջև՝ իմ Քարակոփ ու Նորավանք, իմ Սպիտակավոր ու Թանահատ, Ցախացքար ու Գնդեվանք, Գառնի ու Գեղարդ, Տաթև ու Էջմիածին… և էլի շատ-շատ Խնկելիներ, իմ ազգի ցուրտ ու տաք օրերի հավատարիմ գրիչներ ու զինվորներ, ազգիս պատմության արժանահավատ վկաներ՝ աշխարհով մեկ սփռված…

– Եկեղեցիս հայկական… փոթորկված հոգուս հուսալի նավահանգիստ, ամեն գաղթական հայի համար՝ առաջին և վերջին հանգրվան, քո մոլորյալ ճամփորդին սպասող բաց դուռ… Ամեն անգամ քեզ այցի գալիս՝ կարկամում եմ քո կատարյալ ձևի ու անընգրկելի բավանդակության առջև…

– Ձևը՝ խաղ է անցավոր, – ասում է պոետը: Իսկ հոգին մեծ է, Աստվածային ու անսահման…

Քո խորաններում ես փնտրում եմ Նրան՝ Աստծուն… Քանզի ամեն ուխտավոր վստահ է, որ դու երկինք բարձրացող գաղտնի ճանապարհ ունես, որը Նրա գահի մոտ է տանում: Տանում է փրկության, արդարության ու խաղաղության, և հորդորում. «Արդ կատարյալ եղեք, ինչպես ձեր Երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5. 48):

Եկեղեցիս հայկական, ցանկամ, որ ամեն մի ուխտագնացություն՝ դեպի քեզ, լինի Սուրբ Հոգու ճախրանք՝ ինքնամաքրման բոլոր քավարաններում…

Հոգու պարտատեր եմ… դրանով իսկ քո ամենօրյա ուխտավորը: Եվ Դու, իմ վեհ ու վսեմ Արարում, ինձ և ամեն մի հայ ուխտավորի լռությամբ մի բան ես պարտադրում.

– Սիրելի հայորդի, եկեղեցի մտնելուց առաջ՝ տաճար կառուցիր նախ և առաջ քո ներսում… Տաճար՝ սիրո, բարության, արդարության, խաղաղության, ուրախության, լույսի… վստահ եմ, որ Եկեղեցին Հայկական ոչ մի ոսոխ չի կարող խոնարհեցնել, քանի որ հայի հոգու տաճարը կառուցիկ է ու հաստատ:

Հիշենք, որ մենք առաջինը հավատացինք, որ Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով ու իր նմանությամբ (Ծնն. 2):

Առաջինը մենք չկասկածեցինք, որ Նա ասաց.

– Թող լինի Լույս և եղավ Լույս:

Հիշենք և հավատանք, որ մեր սերն առ Աստված, առ Հայոց Եկեղեցի՝ մեր ազգի փրկության անձնագիրն է, քանզի նա է Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը:

Սոնա Կարապետյան
ՀՀ լրագրողների միության անդամ